Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Տավուշի մարզի «Բերդի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (22 դասաժամ), կենսաբանության (12 դասաժամ), համաշխարհային պատմության (2 դասաժամ), հայոց պատմության (2 դասաժամ), հասարակագիտության (2 դասաժամ), ֆիզկուլտուրա (28 դասաժամ) , ԹԳՀԳ (10 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1) , մեկ լուսանկար 3x4 չափի
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)
- անձը հաստատող փաստաթուղթ
- « Հանրակրթության մասին » ՀՀ օրենքի 26 – րդ հոդվածի 1- ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև 5)
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ – ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Փաստաթղթերն ընդունվում են նոյեմբերի 8-ից մինչև նոյեմբերի 21-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ , կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա նոյեմբերի 23-ին ՝ ժամը 14:00-ին, ՀՀ Տավուշի մարզի Բերդի հ.1 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Բերդ, Լևոն- Բեկի 1:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (094) 81-35-71 հեռախոսահամարով: